նիկում կատարուած փորձերից երևում է, որ Վերօնալը շատ լաւ միջոց է քնի դէմ և գործում է նոյն իսկ այնտեղ, որտեղ միւս դեղերը չեն ներգործում. վերօնալից առաջացած քունը լինում է թեթև և բնական քնին շատ մօտ. քնից յետոյ հիւանդն զգում է իրան հանգստացած, կազդուրուած և առոյգ ու հետևեալ գիշեր քնում է արդէն առանց վերօնալի։

Վերօնալի այդ յատկութիւնը կայանում է նրանում, որ նա թունաւոր չէ և ուրիշ միջոցներից աւելի է ազդում։ Իսկ ինչ վերաբերում է հիւանդութիւն հանգստացնող յատկութեան, նա մորֆիից աւելի պակաս է ազդում։

Ներկայ եղողներին ծանօթացնելով վերօնալի, արեան շրջման, սրտի, շնչառութեան և մարսողութեան վրայ ունեցած ազդեցութեան հետ, պ. Շչերբաչևը ծանօթացրեց նաև վերօնալի մարդու կազմուածքի մէջ եղած փոփոխութիւնների և նրա արտաթորութիւնների վրայ կատարած հետազօտութիւնների հետ։ Օգտուելով քիմիականութիւնից, պ. Շչերբաչևը այն եզրակացութեան է եկել, որ մարդու կազմուածքի մէջ մտցրած վերօնալը արտադրւում է նրանից բոլորովին անփոփոխ դրութեամբ և շարունակում է ազդել բաւական երկար ժամանակ, 2—3 օր։

* *

Ֆրանսիացի բժիշկ Մուայէն զեկուցեց Փարիզի բժշկական ճեմարանին երակախտի (артеріосклерозъ) բժշկման մասին։ Ցիշեալ հիւանդութիւնը կայանում է նրանում, որ զարկերակների պատերը փոփոխւում են, կորցնելով իրանց առաձգականութիւնը և դորա հետ էլ արեան ճնշման դէմ անհրաժեշտ դիմադրութիւն ունեցող յատկութիւնը։ Մերութեան ժամանակ այդ հիւանդութիւնը սովորական է լինում. այդ հիւանդութեան վտանգը կայանում է նրա մէջ, որ զարկերակը կարող է տրաքուիլ և ուղեղի մէջ արեան հոսում գոյանալ։ Մինչև այժմ ոչ մի կանոնաւոր միջոց չկար նորա դէմ։ Եթէ Մուայէի միջոցը հաւանականութիւն գտնի բժշկականութեան մէջ, մեծ քայլ արուած կլինի դէպի առաջ։ Մուայէի միջոցը հետևեալն է։ Խիստ ելեքտրական հոսանքի օգնութեամբ երակների նորաճելութիւնն անցնում է և զարկերակը իր բնական դիրքն ընդունում, որով վտանգաւոր արեանհոսութեան առաջն է առնւում։

ՕՐ. ՆՈՒԱՐԴ ԱՂԱՆԵԱՆՑ